

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԼԻԼԻԹ ՊԻՊՈՅԱՆ**

**ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՎ  
ՀԻՆ ՀՌՈՍԻ ԱՐՎԵՍ**

*ԴԱՍԸՆԹԱՅԻ ԾՐԱԳԻՐ*

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2016

ՀՏԴ 7.032

ԳՄԴ 85

Պ 636

*Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ պատմության ֆակուլտետի  
գիրական խորհուրդը*

**Լիլիթ Պիպոյան**

Պ 636 **Հին Հունաստանի և Հին Հռոմի արվեստ:** Դասընթացի ծրագիր/  
Լ. Պիպոյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2016, 48 էջ:

ՀՏԴ 7.032

ԳՄԴ 85

ISBN 978-5-8084-2100-4

© ԵՊՀ հրատ., 2016

© Լ. Պիպոյան, 2016

# I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## ***ա. Անդրհիւրօրյան սահմանումը***

Հին Հունաստանի արվեստի պարբերացումը. առաջին փուլ՝ նախահունական ժամանակաշրջան իր ենթափուլերով, երկրորդ փուլ՝ բուն հունական ժամանակաշրջան իր ենթափուլերով, և երրորդ փուլ՝ հելլենիստական ժամանակաշրջան: Հելլենիզմ եզրույթի պայմանականությունը: Հին Հռոմի արվեստի պարբերացումը. նախահռոմեական ժամանակաշրջան՝ էտրուսկների արվեստն իր փուլերով, Հռոմի հանրապետական և կայսերական ժամանակաշրջաններ՝ ենթափուլերով:

## ***բ. Պատմա-մշակութային ակնարկ***

Հնագույն մշակույթների տեսակներն ու դրանց տարբերությունները: Հին Արևելքի բռնապետություններում արվեստի դերն ու նշանակությունը հասարակական կյանքում, նրա բնույթը, կանոնակարգավածությունը: Հին Հունաստանի և Հին Հռոմի ստրկատիրության տարբերությունը Հին Արևելքի երկրների ստրկատիրությունից: Հին Հունաստանի հասարակական-քաղաքական կառուցվածքի առանձնահատկությունները: Քաղաք-պետությունների համակարգը: Հին Հունաստանի ժողովրդավարության բնույթը, դրա սահմանափակումները: Ազատ քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները: Դեմոսի և արիստոկրատիայի միջև եղած հակասությունները: Հին Հունաստանի կրոնի անտրոպոմորֆ բնույթը: Հունական դիցաբանության նշանակությունը արվեստում: Կրոնի գործառույթը որպես հասարակական հարաբերությունները կարգավորող և նրա կարիքներին ենթակա ինստիտուտի, այլ ոչ թե գերակա, որպիսին էր կրոնը Արևելքի բռնապետություններում: Արվեստի դաստիարակչական էությունը և հասարակական նշանակությունը:

## ***գ. Անդրիկ արվեստի գեղագիտական հատկանիշները***

Ներդաշնակ գեղեցկության որոնումները: Կալոկազատիայի գաղափարը: Հին Հունաստանի քանդակագործության հերոս կատարյալ մարդու ընդհանրական կերպարը: Հին Հռոմի արվեստի դերը պետականության ստեղծման և ամրապնդման գործում: Անտիկ արվեստում մշակված կանոնները, դրա գաղափարական հատկանիշները, գործառույթն ու խնդիրները հասարակության մեջ: Անտիկ արվեստի դիցաբանական սյուժեներով հանդերձ՝ աշխարհիկ բնույթն ըստ էության:

## II. ՆԱԽԱՀՈՒՆԱԿԱՆ ԿԱՄ ԷԳԵՅԱՆ ԱՐՎԵՍ (3-ՐԳ ՀԱԶ. Մ.Թ.Ա. – 12 Գ. Մ.Թ.Ա.)

### ***դ. Ընդհանուր դրույթներ. Պատկերային համակարգեր***

Երկու պատկերային համակարգեր: Պայմանական–խորհրդանշական պատկերային համակարգի առանձնահատկությունները, ում է այն բնորոշ, որ ժամանակաշրջաններին, որն է այդ համակարգի հիմնական աղբյուրը: Իրապաշտական համակարգի առանձնահատկությունները, դրա համար անհրաժեշտ պայմանները, հասարակական պահանջը: Հին Հունաստանի արվեստին բնորոշ պատկերային համակարգը: Արվեստի հիմնական խնդիրները և միջոցները ըստ Արիստոտելի: Իրապաշտական արվեստի ստեղծման համար անհրաժեշտ հասարակական պատվերը: Հին Հունաստանի արվեստում տեղի ունեցած աստիճանական անցումը պայմանական–խորհրդանշական պատկերային համակարգից դեպի իրապաշտականը: Էգեյան արվեստի պայմանական–խորհրդանշական բնույթը վաղ շրջանում: Արվեստի զարգացման նախնական փուլին բնորոշ արվեստի սինկրետիզմը, վերջինիս սահմանումը: Էգեյան արվեստի իրապաշտական տենդենցները դրա զարգացման ուշ փուլերում:

### ***և. Էգեյան արվեստի պարբերացումը, զարգացման փուլերը***

Էգեյան աշխարհի չորս հիմնական խմբերը ըստ աշխարհագրական դիրքերի: «Էգեյան մշակույթ» և «Կրետե–Սիկենյան մշակույթ» եզրույթների իմաստային տարբերությունը: Էգեյան քաղաքակրթության և արվեստի պարբերացումը ըստ Արթուր Էվանսի՝ այսպես կոչված մինոսյան փուլերով և ըստ Նիկոլաս Պլատոնի՝ այսպես կոչված պալատական փուլերով: Էգեյան արվեստի միջանկյալ դիրքը Հին Արևելքի բռնապետությունների և Հին Հունաստանի գեղարվեստական մշակույթների միջև: Էգեյան մշակույթի հնագիտական հայտնագործությունների պատմությունը: Հենրի Շլիմանի, Վիլիելմ Դյորպֆելդի, Արթուր Էվանսի, Ջեյմս Թեոդոր Բենթի կատարած աշխատանքները Էգեյան հնավայրերի հայտնագործման և պեղումների գործում: Նրանց պեղված բնակավայրերը, պալատները, դամբարանները, հիմնական հնավայրերի պեղման ժամանակաշրջանը: Կրետեյան մշակույթի կործանումը բնական

աղետի պատճառով 1450 թվականին մ.թ.ա: Դորիացիների արշավանքները մ.թ.ա. 12-րդ դարում, Էգեյան մշակույթի վերափոխումը վաղիումականի:

**1. ԿԻԿԼԱԳՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ.  
ԿԻԿԼԱԳՅԱՆ ԿՂԶԻՆԵՐԻ ԱՐՎԵՍՏԸ**

Կիկլադյան արվեստի պարբերացումը: Կիկլադյան կղզիների հնագույն գտածոները. խեցեգործական նմուշներն ու կավե արձանիկները, դրանց գործառույթը, տեսակները. կատարման նյութը, եղանակը, ոճը, հարդարանքը, չափերը, ժամանակագրությունը: *Կուռքերի գլուխները, Տավիդ նվագողի արշանիկները, ջութակաշև արշանիկները, պառկած ֆիգուրի հուղարկավորման արշանիկները, մայր-սպրվածուի ու հնագույն արշանիկները, ընդհանրական արշանախմբերը:*

**2. ՄԻՆՈՍՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ.  
ԿՐԵՏԵՅԱՆ ԱՐՎԵՍՏ**

***ա. Պատմա-մշակութային ակնարկ***

Կրետե կղզու աշխարհագրական դիրքը, բնական պաշարները, առևտրական կապերը, նավագնացությունը, կարևոր նշանակությունը Էգեյան և Միջերկրյածովյան ջրավազաններում: Կրետեյան հասարակարգի առանձնահատկությունը, քրմական դասի և ավտորիտար գաղափարախոսության բացակայությունը: Կրետեյան արվեստի ընդհանուր բնութագիրը: Մինոսյան քաղաքակրթության կենտրոնները Կրետե և Ֆեռա (Սանտորինի) կղզում. Կնոսոս, Ֆաիստոս, Ագիա-Տրիադա, Գուռնիա, Մալլիա, Կամարես, Ակրոտիրի:

***բ. Ճարտարապետություն***

Քաղաքների կառուցվածքը. պաշտպանական կառույցների բացակայությունը: *Կնոսոսի պալատի* ճարտարապետությունը. չափերը, կա-

ռուցվածքը, սենյակների ու սրահների ֆունկցիոնալ բաժանումը խմբերով, դասավորությունը, հարկայնությունը, լուսավորությունը, կառուցման տեխնիկան: *Մեզարև*: Ցուլի պաշտամունքի արտահայտությունը պալատի ճարտարապետության մեջ: Լաբիրինթոս և լաբրիս:

#### **գ. Որմնանկարչություն**

Որմնանկարչությունը որպես դեկորատիվ արվեստի մի տեսակ: Կնոսսոսի պալատի որմնանկարչության առանձնահատկությունները. գաղափարական, սյուժետային, գործառութային, ոճական և կերպարային բնութագիրը, գունա-գծային և հորինվածքային լուծումները, ներկերի պատրաստումը: Եգիպտական կանոնի ազդեցությունը: Կնոսսոսի և Ակրոտիրի պալատների որմնանկարչության կարևորագույն հուշարձանները 17-16-րդ դդ. մ.թ.ա., դրանց ժամանակագրությունը: «*Քուրսարքա*» հուշարձանի կատարման «ստուկկո» տեխնիկան: Կրետեյան որմնանկարչության անկումը մ.թ.ա. 15-րդ դարում:

#### **դ. Խեցեգործություն և խեցենկարչություն**

Խեցեգործությունը որպես հնագույն մշակույթի ամենակայուն տարր: Հնագույն խեցեղենի գործառույթը: Խեցեգործական տեխնիկան Կրետեում: Օռնամենտի, կամ ամբողջ զարդային հորինվածքի գոյացումը առանձին զարդատարրերից, վերջիններիս խորհրդանշական իմաստը: Խեցեգործական նմուշների դեկորատիվ հարդարման երկու տեխնիկաները. փորագրման և նկարագարդման: Նկարագարդման երկու ոճական մոտեցումները: Կրետեին բնորոշ նկարագարդման սկզբունքը: Կրետեյան խեցենկարչության ոճական զարգացման փուլերը 3-րդ հազարամյակից մ.թ.ա. մինչև մ.թ.ա. 1450 թ.: Ոճերի տեսակները, ժամանակաշրջանները. «Կամարես», «Ծովային», «Բուսական», «Պալատական», քարե սավորների բարձրաքանդակային նկարագարդում և ոսկե գավաթների ռելիեֆային հարդարում:

#### **ե. Քանդակագործություն և դեկորատիվ արվեստ**

Կրետեյան կավե, քարե և ձուլածո մետաղներից պատրաստված մանր պլաստիկան: Խոշոր արձանների բացակայությունը, դրանց փայտյա լինելու վարկածը: Կրետեյան մանր պլաստիկայի պատկերման առարկաները: Մայր-աստվածուհու արձանիկները, դրա խորհրդարանությունը, կատարման նյութերը, առկայությունը տարբեր թանգարաններում:

Կնիքները (ինտալիաները) որպես կիրառական արվեստի նմուշներ, կատարման նյութը, վրայի պատկերների սյուժեները: Տավրոմախիա:

### **3. ՀԵԼԼԱԳԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԻՐԹՈՒԹՅՈՒՆ. ԱՔԵՅԱՆ ԱՐՎԵՍՏ (2500-1125 Մ.Թ.Ա.)**

#### ***ա. Ճարտարապետություն***

Հելլադեական քաղաքակրթության կենտրոնները մ.թ.ա. 15–12 դարերում: Յեդային հասարակարգի քայքայում, ազնվականության առանձնացում, մանր քաղաք–պետությունների գոյացում՝ բասիլևսի դեկավարությամբ. Միկենք, Տիրինթոս, Օրքոմենոս, Աթենք, Փիլոս: Տիրինթոս և Միկենք բերդաքաղաքների ընդհանուր բնութագիրը, հատակագծումը, գործառույթային բաժանումը քաղաքների ներսում, տարբերությունը Կրետե կղզու քաղաքներից: Պարսպապատերի մի քանի շարքերը, կառուցման տեխնիկան, *Միկենքի առյուծներով շքամուրքը*: Միկենքի պալատը, մեգարոնատիպ կառույցը: Դոմոս, պրոդոմոս: Միկենքի և Տիրինթոսի միջնաբերդերը որպես ապագա հունական քաղաքների ակրոպոլիսի նախատիպ: Միկենքի դամբարանային շրջանը: «*Արրևսի գանձարան*» դամբարանը:

#### ***բ. Որմնանկարչություն և խեցեղեղարչություն***

Հելլադեական և Մինոսյան արվեստների փոխազդեցությունը: Միկենքի և Տիրինթոսի որմնանկարների նմանությունն ու տարբերությունը կրետեյան որմնանկարների համեմատությամբ: *Վարազի որսը* որմնանկարը Տիրինթոսի պալատում:

Կավե սափորների և մետաղական գավաթների սյուժետային պատմողական հորինվածքները: *Չինվորներով խառնարանը և Մարտիակառքով խառնարանը*: Միկենյան որմնանկարչության մեկ այլ սկզբունքը՝ տարբեր կրետեյան սափորանկարչությունից; սափորանկարչության սխեմատիզմը, չոր երկրաչափայնությունը, դեկորատիվությունը, պայմանականությունը, հարթայնությունը, դինամիզմը: Տարագների տարբերությունը կրետեյանից: Անկումը և պարզունակ երկրաչափայնությունը սկսած մ.թ.ա. 13 դարից:

Փայտյա սարկոֆագի նկարագարումը, սյուժեները: *Ազիս–Տրիս-դայի սարկոֆագը, մ.թ.ա. 14 դար:*

**գ. Քանդակագործություն և դեկորատիվ արվեստ**

Մանր պլաստիկան որպես քանդակագործության գերիշխող տարատեսակ: Ալեքաստրե արձանիկներ, տաճարի մանրակերտեր: Գեկորատիվ արվեստի նմուշներ: Շլիմանի պեղումներից գտած հնագիտական նյութը: Ոսկե դիմակների գործառույթը: Նկարագարող դաշույնների սյուժետային պատկերները, կատարման տեխնիկան:

**4. ԱՐԵՎՏԱԱՆԱՏՈՒԻԱԿԱՆ ԿԱՄ ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՏՐՈՅԱՅԻ ԱՐՎԵՍՏԸ**

Փոքրասիական քաղաքակրթության կարևորագույն կենտրոնները: Տրոյայի պեղումների պատմությունը, վայրը: Տրոյայի հնագիտական ինը շերտերը (մ.թ.ա. 3-րդ հազարամյակից մինչև մ.թ. 400 թ.): Լաբրիսի նշանակությունը Տրոյայի մշակույթում: Տրոյայից հայտնաբերված զարդարվեստի ոսկե նմուշները: Գալարագարողը որպես արքետիպային մշակութային նշան, նրա իմաստաբանությունը և կիրառությունը Հին Հունաստանի արվեստում:



### III. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՐՎԵՍ

#### 1. ՀՈՄԵՐՈՍՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԿԱՄ ՄՈՒԹ ԳԱՐԵՐԻ ԱՐՎԵՍ (1100 – 750 Մ.Թ.Ա.)

##### ***ա. Պատմա-մշակութային ակնարկ***

Հունական էթնոսի ձևավորումը Հոմերոսյան ժամանակաշրջանում: Նախադասակարգային հասարակարգ: Ստրկատիրության ձևավորում: Դիցարանության ձևավորում: Հոմերոսյան Հունաստանի մշակույթի համեմատությունը Էգեյան մշակույթի հետ: Տաճարային շինության տիպերի ձևավորում: Հոմերոսյան Հունաստանի արվեստի երկրաչափական ոճը:

##### ***բ. Ճարտարապետություն***

Տաճարների մանրակերտեր: Հենակա-հեծանային համակարգը որպես ձևավորվող տաճարային շինության կոնստրուկտիվ համակարգ: Տաճարի և բնակարանի կառուցվածքային ընդհանրությունները: Բակ, ջրավազան: Ֆեռա (ներկայիս Սանտորին) կղզու *Ապոլլոնի սրբավայրը*: *Դրերոսի տաճարը*: *Պրինհիալի տաճարը*, նրա հարթ տանիքի ձևավորումը երկու սֆինքսներով՝ որպես ապագա ճակտոնային քանդակագարություն:

##### ***գ. Քանդակագործություն***

Մոնումենտալ քանդակի բացակայություն: Փայտյա կուռքեր – քտաններ: Երկրաչափական բնույթի մանր պլաստիկա. *Չին, Հերակլեսն ու կենդավրոսը*:

##### ***դ. Խեցեղործություն և խեցենկարչություն***

Երկրաչափական ոճը որպես սաղմնավորվող հունական մշակույթի առաջատար ոճ: Սյուժետային պատկերներ և զարդանախշեր: Դիպլոմյան սափորների ժամանակագրությունը, վայրը, ձևը և նկարագարումը, վերջիններիս տրամաբանական կապը միմյանց հետ: Ամբողջի ու առանձին մասերի համաչափությունը:

## 2. ԱՐԽԱՅԻԿ ՇՐՋԱՆԻ ԱՐՎԵՍՏ (Մ.Թ.Ա. 7-6 ԳԳ.)

### ***ա. Պատրմա-մշակութային ակնարկ***

Անցում համայնատիրականից դեպի ստրկատիրական հասարակարգ: Արիստոկրատիայի (ազնվականության) ձևավորում, նրա ձգտումը դեպի բռնատիրական կառավարում: Դեմոսի պայքարն էվպատրիդների դեմ, արդյունքում ձևավորված ուրույն տիպի ստրկատիրություն՝ ժողովրդավարական կողմնորոշմամբ: Քաղաք-պետություն: Աթենքի և Սպարտայի հակադրությունը: Հին հույների գաղափարախոսության կենտրոնական գաղափարը – կատարյալ մարդը, հին հունական ժողովրդավարության մեջ ձևավորված հիմնական գաղափարախոսական դրույթները: Պոլիսի դերը արվեստի շրջադարձի գործում երկրաչափական օրնամենտալիզմից դեպի պլաստիկ արվեստ, էպոսի ընդհանրական կերպարներից դեպի անձնական՝ մարդկային քնարերգություն: Հունական դիցաբանության վերջնական ձևավորումը: Արվեստների հիմնական ուղղությունների ձևավորումը. տաճարային հիմնական հորինվածքային տիպեր, սափորների հիմնական ձևեր, սափորանկարչության հիմնական հորինվածքային լուծումներ և կատարման տեխնիկա:

### ***բ. Ճարտարապետություն***

Ակրոպոլիսը և ագորան որպես պոլիսի ճարտարապետության երկու կենտրոններ: Օլիմպիական և Պյոթյան (Դելփիկի) խաղերը, Էֆերների դպրոցները, թատրոնը, գեղարվեստական խորհուրդը և խնջույքի երևույթը (symposium) որպես հելլենական աշխարհը միավորող արհեստական կարգավորիչներ: Օլիմպիայում Չևսի և Դելփիկում Ապոլլոնի սրբատեղիների ճարտարապետական համալիրները: Հունական տաճարային հիմնական հատակագծային տիպերը: Հունական օրդերային համակարգը: Դորիական և հոնիական օրդերներն իրենց համաչափություններով, բաղկացուցիչ մասերով: Մոդուլային ճարտարապետություն: Դորիական և հոնիական տաճարները, նրանց համաչափական և կառուցվածքային տարբերությունները: *Հերայի տաճարը Օլիմպիայում* 7 դ. մ.թ.ա., *Սելինունրի տաճարային համալիրը* 6 դ. մ.թ.ա., *Ապոլլոնի տաճարը Կորնթոսում* 6 դ. մ.թ.ա., *Պեստոմի Բազիլիկան* 6 դ. մ.թ.ա., *Արդեմիսի տաճարը Եփեսոսում* 6 դ. մ.թ.ա.: Արխայիկ տաճարների համաչափական առանձնահատկությունները:

#### **գ. Քանդակագործություն և կիրառական արվեստ**

Ժողովրդավարության հաստատման հետ հումանիստական իդեալների հաստատումը: Մարդու մարմինը որպես գեղեցկության աղբյուր, քնարերգությունը որպես նոր բանաստեղծական ժանր: Ձևի ու ծավալի մշակումը քանդակագործության մեջ: Շարժման աստիճանական մշակումը քանդակագործության մեջ: Կուրսներ (սրանց ատտիկյան և փոքրասիական տարբերակները) և կորաներ: Արխայիկ ժպիտ: *Դելուսյան Արարեմիս* 650 թ.մ.թ.ա., *Հերայի արշանի գլուխը* 600 թ.մ.թ.ա., *Նապաստակով աստվածուհին*, *Աթենքի Ակրոպոլիսի քանդարանի կորաները*, *Կրոյսոսի մահարշանը*, *Մելոս կղզու կուրոր:* *Կլեոբիսի ու Բիլոնի արշանախմբի* պայմանական բնույթը որպես արձանախումբ: Տաճարային քանդակագործությունը տաճարների ճակտոններում և մետոպներում: *Աթենքի Ակրոպոլիսի հնագույն Դեկալոնալեոն տաճարի ճակտոնի քանդակները*, *Մելինոնի «C» տաճարի մետոպների բարչրաքանդակները*, նրանց պայմանականությունը, շարժման խնդիրը: «*Ծնկաչոր վագր*»-ի *պարկերները Արարեմիսի տաճարում Կերկիրա կղզու վրա: Պեսարոմի Հերայի տաճարի «Վագոդ ներեիդները»:*

#### **դ. Խեցեգործություն և սափորանկարչություն**

Կավի մշակման կատարելագործումը: Կերամիկոս: Սափորների կայուն ձևատեսակները, նրանց ֆունկցիոնալությունը: Վաղ արխայիկայի (7 դար մ.թ.ա.) արևելահայաց կամ գորգային ոճը Կորնթոսում, Փոքր Ասիայի քաղաքներում, Հռոդոս և Սամոս կղզիներում: *Լևիի օյնոքոյան:* Սևանկար ոճի հանդես գալը, տեխնիկան, հորինվածքները, սյուժեները: Սափորանկարիչներ Կլիտիաս, Էքսեկիաս, Ամասիս, խեցեգործ Էրգոտիմոս: *Ֆրանսուայի սափորը: Էքսեկիասի «Դիոնիսոսը նավակում» կիլիկը:* Անդոկլիդոսի կարմրաֆիգուր սափորանկարչության գյուտը 530 թ.մ.թ.ա, դրա տեխնիկան: *Անդոկլիդոսի երկլեզու սափորը:*

#### **ե. Գեղանկարչություն**

Առանց հարթքանդակի գունազարդ մետոպները Ապոլլոնի տաճարում Թերմոմ, 7 դարի վերջ մ.թ.ա, որպես գեղանկարչության նախօրինակ: Պինակաները որպես հաստոցային նկարչության նախօրինակ, կատարման նյութը, տեխնիկան, գործառույթը: Գեղանկարչության զարգացումը շարժման պատկերման, մարմինների մոդելավորման, հերոսների հոգեկան աշխարհի պատկերման առումով:

### **3. ԳԱՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՐՎԵՍՏ (490-323 Մ.Թ.Ա.)**

#### **3.1. Պատմա–մշակութային ակնարկ**

Պարսից արշավանքները դեպի Հունաստան մ.թ.ա 500-478 թվականներին, այդ պատերազմում հաղթանակած Հունաստանում հերոսական արվեստի վերելքը: Բոլոր արվեստների ծաղկումը դասական շրջանում: Առանձին արվեստների ձեռքբերումները. կանոնավոր հատակագծման սկզբունքը ճարտարապետության մեջ, Ակրոպոլիսի տաճարներում դորիական և հոնիական օրդերի համատեղ գործածումը; իրապաշտական քանդակագործության մեջ շարժման պատկերումը, ազատ ասիմետրիկ հորինվածքների զարգացումը տաճարային քանդակագործության մեջ; սյուժեների ընդլայնումը և ավելի իրապաշտական պատկերումը խեցեղնկարչության մեջ; քանդակի և ճարտարապետության համագոր համակեցությունը: Հին Հունաստանի կատարյալ հումանիստական արվեստի նշանակությունը ամբողջ աշխարհի համար:

#### **3.2. Վաղ դասական շրջանի արվեստ (490-440 մ.թ.ա.)**

##### ***ա. Ճարտարապետություն և քանդակագործություն***

Դորիական պերիպտերոսը որպես գերիշխող տաճարային տիպ: Համաչափությունների ճշգրտում,  $2n+1$  կանոնի հաստատում: Անցումային տիպի տաճարներ. *Աթենաս Աթալեցու տաճարը Էգին կղզում*, 490 մ.թ.ա., *Սելինունյրի E տաճարը* 470-460 մ.թ.ա.: Աթենասի տաճարի արևելյան և արևմտյան ճակտոնների քանդակների սյուժեները, հորինվածքը, ոճական տարբերությունը: Վաղ դասական շրջանի տաճարի լավագույն օրինակներ. *Պոսեյդոնի տաճարը Պեսարոսում*, 5-րդ դար մ.թ.ա., և *Ջուսի տաճարը Օլիմպիայում*, 468-456 մ.թ.ա., Լիբոն ճարտարապետ: Ջուսի տաճարի ճակտոնների քանդակների սյուժեները, հորինվածքը, մետոպների հարթաքանդակները: Պերոպսի և Էնոմալիսի մրրցակցության թեման որպես օլիմպիական խաղերի սկիզբ: Կենտավրոմախիան որպես հունական արվեստի կենտրոնական գաղափարական

խնդիրներից մեկը ներկայացնող սյուժե:

Լյուդովիգի գահի հարթաբանդակները որպես համաշխարհային արվեստի գլուխգործոց, հորինվածքը, խորհրդաբանությունը, կնոջ կերպարը:

Քանդակագործության երկու ուղղությունները. դորիական (Արգոս–Սիկիոնյան դպրոցը) և հոնիական (փոքրասիական և հարակից կղզիների): Երրորդ, միավորող ուղղությունը – ատտիկյան (Աթենքի դպրոցը): Տարբերությունները ուղղությունների միջև: *Հարմոդիասն և Արիստոգիլոնը* արձանախումբ, որպես շարժման խնդրի և միասնական հորինվածքի ավելի կատարյալ օրինակ՝ արխայիկայի համեմատությամբ: 5-րդ դարի առաջին քառորդի քանդակագործներ. Ագելադ (*Ձևս – ամպրոպանեպ* – Ագելադի շրջանակ), Պյութագորաս Ռեգիացի (*Հակինթ, Էրոպ Սոբանցո* և նույն հեղինակի շրջանակի *Դելֆյան կառնապանը*), Կալամիդ (*Ապոլլոն Օմֆալ*): 5-րդ դարի երկրորդ քառորդի անհայտ հեղինակի *Ուրքից փուշ հանող տղան*: Հերոսականության թեման: Իրապաշտական քանդակի կատարելագործումը մ.թ.ա. 5-րդ դարի երկրորդ քառորդում. *Ապոլլոնը Պոմպեյից և Հադթոդ վագորդոտիկն*, մ.թ.ա. 5-րդ դարի 60–ականներ: Հոնիական քանդակի օրինակներ. *Ներեիդները Քասնթոսից*, 5-րդ դարի վերջին երրորդ: Արխայիկայի բռնագրությունից դեպի ազատ շարժում:

Ատտիկյան դպրոց. Սիրոնը Էլեվֆերից, 460-440 մ.թ.ա.: Շարժման միրոնյան բանաձևը: *Սկավառակ նեպոդը, Աթենասն ու Մարսիասը, Նիզակին հենված Աթենասի ռելիեֆը*: Գիտակցականի հաղթանակը անասնական կրքի հանդեպ:

Հոնիական ուղղություն. *Երկնքից իջնող Նիկեն* Օլիմպիայի համալիրից, մ.թ.ա. 5-րդ դարի երրորդ քառորդ, քանդակագործ՝ Պեոնիոս:

Դորիական ուղղություն. Պոլիկլետը Արգոսից, 460-420 մ.թ.ա.: Վաղ դասականությունից դեպի բարձր դասականություն: Պոլիկլետի «Կանոնը». մարդկային մարմնի համաչափությունների մասին տեսություն: *Դորիֆորը*, 440 մ.թ.ա., որպես կանոնի իլյուստրացիա և քաղաքացի–զինվորի կատարյալ կերպար: Խիազմ: *Դիադոմեն*, 420 մ.թ.ա., *Վիրավոր ամազոնուտիկն*:

### ***բ. Սափորանկարչություն***

Կարմրանկարի վերջնական հաղթանակը, նրա առավելությունները սևանկարի նկատմամբ: Եռաչափության փորձերը սափորանկարչության մեջ:

Եվֆրոնիոս, 6-րդ դարի վերջ. բարդ շարժման պատկերման նախնական փորձեր, ընդգծված դեկորատիվություն. *Առաջին ծիծեռնակը, Անտրեյոսն ու Հերակլեսը*:

Դուրիսի գծանկարչական տաղանդը. *Էոսն ու Մեմնոնը*:

Բրիգի բարդ սյուժեներն ու դրամատիզմը. *Տրոյայի գրավումը, Մեմադեն, Խրախնանքի հեղինակները*: Մակագրություններ, բնապատկերի բացակայություն:

### **3.3. Բարձր դասական շրջանի արվեստ (450-410 թ.մ.թ.ա.)**

#### ***ա. Ճարտարապետություն***

Աթենքը մ.թ.ա. 5-րդ դարում Պերիկլեսի կառավարման շրջանում (մ.թ.ա. 443-429 թթ.) որպես ժողովրդավարության և բարձր մշակույթի կենտրոն: Ճարտարապետության նոր ճյուղերի զարգացում. քաղաքաշինություն, հասարակական շենքեր: Թատրոն, բուլետերիոն, գիմնասիոն, ստոյա, ստադիոն, հիպոդրոմ: Աթենքի նավահանգստի՝ Պիրեյի և փոքրասիական քաղաքների վերականգնումը ըստ Հիպոդամոսի կանոնավոր հատակագծման: Աթենքի Ակրոպոլիսի վերակառուցումը: Ակրոպոլիսի նշանակությունը քաղաքի հասարակական կյանքում: Ակրոպոլիսի հատակագծային հորինվածքը, նրա գլխավոր առանցքը. Պանաթենեյան երթի ուղղությունը: Ակրոպոլիսի ճարտարապետության մեկ միավորող սկզբունքը, որը խորհրդանշում էր ամբողջ Հելլադի կոսմոպոլիսի միավորումը: Գլխավոր ճարտարապետ և քանդակագործ Ֆիդիասը: Կարևորագույն կառույցները. *Պրոպիլեոն*, 437-432 մ.թ.ա., հեղինակ Մնեսիկլես: *Նիկե Ապոկրոսի տաճարը* 449-421 մ.թ.ա., հեղինակ Կալլիկրատես: *Պարթենոն* 447-438 մ.թ.ա., հեղինակներ Իկտինոս և Կալլիկրատես: *Էրեքրեոն* 421-406 մ.թ.ա., հեղինակներ Արխիլոխ և Ֆիլոկլես: Տաճարների համաչափությունները, չափերը, փոխադարձ դիրքը,

յուրաքնչյուրի հորինվածքը, առանձնահատկությունները: Պրոպիլեոնի հորինվածքը: Պարթենոնը որպես դասական արվեստի անգերազանցելի նմուշ, դրա երկդահլիճ հորինվածքը, արտաքին և ներքին մասշտաբները: Արվեստների սինթեզը: Էրեքտեոնը որպես ուշ դասականության նմուշ, դրա ասիմետրիկ կառուցվածքը, *կարիասրիդների սյունասարսառ* (Պանդրոսեն): *Դիոնիսոսի քարոնը* Ակրոպոլիսի հարավային լանջին, մ.թ.ա. 6-5-րդ դդ., ճարտարապետ Լիկուրգոս: Հունական թատրոնի աստիճանական զարգացումը վրանից մինչև կանոնիկ թատերական շենք, դրա կառուցվածքը, բաղկացուցիչ մասերը: Դիոնիսոսի թատրոնի չափերը, կառուցվածքը:

### **բ. Քանդակագործություն**

Ֆիդիասի հեղինակած Աթենաս աստվածուհու երեք արձանները Ակրոպոլիսում. *Աթենաս Պրոմախոս* մ.թ.ա. 5-րդ դարի երկրորդ քառորդ, *Աթենաս Պարթենոս* 438 մ.թ.ա. և *Աթենաս Լեանիա*, դրանց կատարման տեխնիկան և նյութը, չափերը, հռոմեական կրկնօրինակները: Պարթենոնի երկու ճակտոնների քանդակների հորինվածքները, հրաժարումը խիստ կենտրոնաձգությունից և սիմետրիայից, սյուժեները: Տաճարի 92 մետոպների հարթաքանդակների թեմաները ըստ տաճարի կողմերի, մետոպների հորինվածքներն ու ոճական տարբերությունները: Տաճարի ծոփորի հարթաքանդակները, նրանց ռիթմը, դասավորությունը, սյուժեն: Էրեքտեոնի կարիատիդները: Նիկե Ապտերոսի տաճարի ցանկապատի *Սանդալը կապող Նիկեն* հանճարեղ հարթաքանդակը: Ֆիդիասի աշակերտ Ալկամենի *Աֆրոդիտեն այգիներում* որպես նոր քնարականության օրինակ: *Մնեսարետեյի* (մ.թ.ա. 4-րդ դարի սկիզբ) և *Գեգեսոյի* (մ.թ.ա. 410) մահարձանները:

### **գ. Սափորանկարչություն**

Շարժման ազատ պատկերում, հոգեկան աշխարհի պատկերման առաջին փորձեր: Սյուժեները ավելի հերոսական և մոնումենտալ: *Օրվյեստոյի սափորը Լուլրում*, հեղինակ՝ Նիոբիդների վարպետ: Հրաժարում ծոփորատիպ հորինվածքներից, ֆիգուրների ազատ բաշխում սափորի մակերևույթին: 5-րդ դարի վերջի սափորանկարչության անկումային նկարագիրը. գերժանրաբեռնվածությունը ֆիգուրներով և զարդերով, հստակ հորինվածքի կորուստը: Սափորանկարիչներ Կլեոֆոն, Մի-

դիաս: Նույն ժամանակաշրջանի լիբիական բանաստեղծականությանը նկարագրող ճերմակաֆոն լեկիֆներ–աճյունասավորները որպես նախապատրաստում ուղ դասականության: *Ձինվորի հրաժեշտը*: Որմնանկարչության մեծ վարպետ Պոլիզոնտը, նրա ներկայանալի 4 գույները: Ապոլոդոր Աթենացին, որն առաջինը պատկերեց լուսաստվերը:

### **3.4. Ուղ դասական շրջանի արվեստ (4-րդ դարի սկիզբ – 323 թ.մ.թ.ա.)**

#### ***ա. Պատմա-մշակութային ակնարկ***

Ուղ դասականությունը 431–404 թթ. Պելոպոննեսյան պատերազմներից հետո: Դասական արվեստի ավարտի շրջան: Մշակույթի և քաղաքական կյանքի նահանջ: Ստրկատիրության աճ: Մանր ազատ գործատերերի սնանկացում: Ազատ ստեղծագործողների պակասում: Մակեդոնիայի հզորացում: Ընդհարումներ պոլիսների միջև: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները դեպի Արևելք, Հունաստանի պատմության դասական շրջանի վերջ: Ազատ քաղաքացու իդեալի քայքայում որպես պոլիսի քայքայման հետևանք: Նյութապաշտական և իդեալիստական գաղափարների պայքար, գիտական մեթոդի զարգացում, աճող հետաքրքրություն դեպի մարդու անձը, մարդկային փոխհարաբերություններն ու արատները, նրա հոգևոր աշխարհը: Դիցաբանական մտածողության անկում: Մ.թ.ա. 4-րդ դարի արվեստը դարի առաջին երկու երրորդների ընթացքում, նրա կապը դասականության հետ, իսկ վերջին երրորդում՝ բեկում:

#### ***բ. Ճարտարապետություն***

Շինարարության սակավեցում: Տաճարների հասարակական դերի կորուստ, սակայն օրդերային համակարգի պահպանում: *Ապոլլոնի տաճարը* Բասում, ճարտարապետ Իկտինոս, 430-420 մ.թ.ա.: Առաջին անգամ երեք օրդերների օգտագործում միևնույն կառույցում, դորիական, հոնիական և կորնթական (վերջինս մշակվել է Կալլիմախ քանդակագործի կողմից): Առաջին անգամ քանդակային ծովորի տեղադրում ինտերյերում: Բուն հասարակական շենքերի կառուցում: Թատրոնի վե-



րելք: *Էպիդավրոսի քարտրոնը*, 340-330 մ.թ.ա., ճարտարապետ Պոլիկլես Կրտսեր. կառուցվածքը, չափերը, ակուստիկ բացառիկ հասկանիչները: *Մեգալոպոլիսի քարտրոնը* 370 մ.թ.ա., նրա կառուցվածքը, չափերը: Ֆերսիլիոնի սրամիտ հորինվածքը:

Անձը մեծարող շինություններ որպես նորույթ Հին Հունաստանի իրականության մեջ. *Լիսիկրարեսի խորեգիկ հուշարձանը* Աթենքում, 334 մ.թ.ա., *Մավսոլի դամբարանը* Հալիկառնասում, 353 մ.թ.ա., սրանց ճարտարապետական կառուցվածքը:

**գ. Քանդակագործություն**

4-րդ դարի քանդակագործության երկու հիմնական ուղղությունները. առաջինը – բարձր դասական արվեստի իդեալներին հարազատ մնացած, բայց դրա բովանդակությունը կորցրած արստրակտ, սառը գեղեցկություն ստեղծող այսպես կոչված կեղծ դասականը: Ներկայացուցիչները Կեֆիսոդոտ, Բրիակսիս, Տիմոթեոս, Լեոխարես: Մյուս ուղղությունը – իրապաշտական, ժամանակաշրջանի հույզերն արտահայտող, որի ներկայացուցիչներն են Դեմետրիոս Ալոպեկցին, Սկոպասը, Պրաքսիտելեսն ու Լիսիպոսը:

Կեֆիսոդոտի *Էյրենասն` Պլուրոսը գրկին* արձանախումբը որպես անցումային ոճի արձանախումբ` կենցաղային տեսարանի իդեալականացված մեկնաբանությամբ: Դեմետրիոսի քանդակած *Անդրիսֆենի դիմաքանդակը*, 375 մ.թ.ա., որպես ներանձնական հուզականություն պատկերող վաղագույն օրինակներից մեկը:

Սկոպասը 395-350 մ.թ.ա., 4-րդ դարի մեծագույն վարպետներից մեկը: Սկոպասի անդրադարձը դեպի հերոսական կերպարը, տոգորված, սակայն, ուժգին հուզականությամբ, գերարտահայտիչ մատուցմամբ, դրա տարբերությունը բարձր դասականության վեհ պարզությունից: Շարժման խնդրի լուծումը Սկոպասի արվեստում, նրա հեղինակած (որպես ճարտարապետ և քանդակագործ) *Աթենասի տանարը Տեգեյում, զինվորի գլուխը*: Սկոպասի հրաժարումը բրոնզից, մարմարե բոլորաքանդակ *Պարոդ Մենադեն: Պարսևու մահարձանը* 340 մ.թ.ա. և *Մավսոլի դամբարանի հարթաքանդակները* (Տիմոթեոս, Բրիակսիո և Լեոխարես քանդակագործների հետ միասին) 350 մ.թ.ա., սրանց զգացմունքային, լարումային արտահայտչականությունը; համեմատություն Պարթենոնի հարթաքանդակների հանդարտ վեհաշուք շարժման հետ:

Պրաքսիտելեսը Ատտիկայից, ծնվ. 390 մ.թ.ա.: Հանդարտ կանգնած ֆիգուրի ներքին հուզական շարժում, ինքնամփոփ հերոսներ, կերպարների ընդհանրացվածությունը, սակայն նրբորեն արտահայտված հոգեկան ապրումներով: Մարմարի մշակման նրբագույն տեխնիկա և մարմնի նրբագույն մոդելավորում, ստվերների փափկություն, օղի շղարշ: *Հերմեսը՝ Դիոնիսոսը գրկին* 330 մ.թ.ա., *Կնիդոսի Աֆրոդիտեն* 360 մ.թ.ա., առաջին անգամ աստվածուհին մերկ, *Հանգստացող սասրիքը* – աստվածը որպես երիտասարդ տղա, *Ապոլլոն Սաուրոկլոն* 4-րդ դարի վերջին քառորդ, *Արյենիսը Գաթիայից* – ոչ թե աստվածուհու, այլ պարզ մի աղջկա կերպար:

Լիսիպոսը, ծնվ. 390 մ.թ.ա.: Իրապաշտական ուղղության հանճարեղ ներկայացուցիչ, Պրաքսիտելի և Սկոպասի հետևորդ: Լիսիպոսի հերոսները որպես ընդհանրացված կերպարներ, բայց հիմա ոչ թե որպես պոլիսի քաղաքացի, ինչպես բարձր դասականության մեջ էր, այլ որպես որոշակի մասնագիտական, տարիքային կամ բնավորության առանձնահատկությունների տեր և ներկայացուցիչ: Լիսիպոսի շարժման բանաձևը. անցում շարժումից դեպի դադար կամ ընդհակառակը: *Ապոքսիոմեն* 325-300 թթ մ.թ.ա.: Հերակլեսի սխրանքների շարքը. *Ֆառնեզեյի Հերակլեսը*, *Հերակլեսը եղջերուի հետ*, *Հերակլեսը և Նեմեյի առյուծը և այլն*: *Հանգստացող Հերմեսը*: Դիմաքանդակներ. *Բիասի*, *Էվրիպիդեսի*, *Արիստոտելի*, *Ալ. Մակեդոնացու*:

4-րդ դարի երկրորդ կեսում հունական դեմոկրատիայի վերջնական պարտությունը նոր ստրկատիրության գրոհի ներքո: Ալեքսանդր Մակեդոնացու հաջողությունները արևելքում մ.թ.ա. 334-325 թվականներին որպես հիմք նոր, հելլենիստական դարաշրջանի համար: Նոր միապետական գաղափարներին ծառայող կեղծ–դասական ուղղության վառ ներկայացուցիչ Լեոխարեսը, Մակեդոնացու պալատական քանդակագործ – նկարիչը: Նրա *Բելվեդերի Ապոլլոնը*, 340 մ.թ.ա. և *Վերսալի Արյենիսը*:

#### **դ. Սափորանկարչություն**

Սափորների ձևերի բարդեցում, կավե սափորների նմանակումը թանկ արծաթե և ոսկեգօծ ձուլածո և հարթաքանդակներով ծածկված սափորներին, նկարազարդման մեջ ժանրային տեսարանների պատկերումը; զարդայնության ավելի մեծ նշանակությունը:

## IV. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ (323-30 Մ.Թ.Ա.)

### *ա. Պատրճա-մշակութային ակնարկ*

323 թվականին Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից հետո հելլենիստական աշխարհը կազմող ստրկատիրական կարևորագույն պետությունները. Մակեդոնիայի թագավորությունը (Հունաստանն իր կազմի մեջ), Սելևկյանների թագավորությունը, Պերգամոսը, Հռոդոսը, Պրտոմեոսյան Եգիպտոսը, Պոնթոսը, Վիֆինիան: Հունաստանի մշակութային ազդեցությունը և հելլենիստական աշխարհը միավորող «կոյնե» հունարեն լեզուն: Հունականի և տեղական մշակութային ավանդույթների միախառնումով առաջացած յուրահատուկ ոճեր: Խոշոր քաղաքների առաջացում: Հելլենիզմի երկու փուլեր. վաղ շրջան, մ.թ.ա. 4-րդ դարի վերջից մինչև 2-րդ դարի սկիզբ (հելլենիստական պետությունների վերելք), և ուշ շրջան, մ.թ.ա. 2-1 դարեր մ.թ.ա. (այդ պետությունների աստիճանական անկում և ծայրամասային պետությունների վերելք (Հայաստան, Պոնթոս, Պարթևստան)): Փիլիսոփայության մեջ Էպիկուրի նյութապաշտական, աթեիստական գաղափարախոսությունը և նրան հետևած ստոիկների ֆատալիստական գաղափարախոսությունը: Լուկրեցիոսի «կամքի ազատության» գաղափարը: Հունաարևելյան դիցաբանության սինկրետիզմը: Թատրոնում տրագեդիային փոխարինելու եկած կատակերգությունը, Մենանդերի կենցաղային կատակերգությունները:

### *բ. Քաղաքաշինություն*

Քաղաքաշինական կարևորագույն շեշտի տեղափոխումը տաճարից դեպի արևտրա-ադմինիստրատիվ հրապարակ՝ ագորա իր հասարակական շինություններով: Մոնումենտալ քանդակի ներկայությունը քաղաքային միջավայրում: Լանդշաֆտային ճարտարապետություն: Քաղաքների կանոնավոր կառուցապատում ուղիղ և լայն փողոցներով: Ալեքսանդրիան որպես Հելլենիստական աշխարհի մշակութային մայրաքաղաք, Անտիոքը, Պերգամոնը, Մագնեսիան, Միլեթը, Սիրակուզը, Հռոդոսը, Հալիկառնասը, Եփեսոսը և այլ: Պարսպապատերի բազմաշերտ համակարգը:

#### ***գ. Ծարպարասպեություն***

Կառույցների շքեղացում, չափի մեծացում: Պերիպտերոսի փոխարեն ավելի հանդիսավոր դիպտերոս, դորիական օրդերի փոխարեն՝ հունիական: Օրդերի կիրառությունը որպես դեկորատիվ տարր: Շինտեխնիկայի կատարելագործում: Մարմարի, կրաքարի, հում և թրծված աղյուսի օգտագործում, բարդեցված հատակագծեր, տեղ-տեղ կամարների և թաղերի կիրառում: Բուլետերիոններ, գիմնասիոններ, գիմանոցներ, ստորգետնյա ջրամբարներ Ալեքսանդրիայում, ծովային նավահանգիստներ, ծովապատեղեղներ, փարոսներ: Պերիստիլային բնակարանի ձևավորում, դրա կառուցվածքը, հատակագծումը, բաղկացուցիչ մասերը:

#### ***դ. Քանդակագործություն. ամենաառաջադար արվեստը իր հիմնական երեք տեսակներով***

Առաջին տեսակի խնդիրները – անհատի պատկերում, դիմաքանդակի զարգացում: Դասականության ազատ քաղաքացու կերպարն այժմ տրոհված է երկու բաղկացուցիչների. չափազանցված հերոսական և լիրիկական, ինտիմ: Ըստ այդ բաժանման՝ իշխող խավի դիմաքանդակների և բանաստեղծների, փիլիսոփաների դիմաքանդակների հոգեբանական տարբերությունները:

Երկրորդ տեսակը – մոնումենտալ քանդակը որպես նորույթ: Եռաչափ քանդակախմբեր, մեծ ծավալի հարթաքանդակներ: Սրանց բնորոշ դրամատիզմը, երբեմն ողբերգականությունը, պատկերվող մարմինների գերլարումը: Տարբերությունը դասականության զսպված և ուժեղ կամքի տեր կերպարներից:

Երրորդը – ժանրային քանդակ, սրա մակերեսայնությունն ու նատուրալիզմը, բնության պատկերումը հարթաքանդակում որպես նորույթ:

#### ***ե. Գեղանկարչություն***

Բնանկարի ու նատյուրմորտի զարգացում: Ավելի բարդ հորինվածքներ, հեռանկարի փորձեր: Խճանկարի զարգացում:

#### ***զ. Կիրառական արվեստ***

Փայտուն վերելք, ժամանակաշրջանին բնորոշ շքեղության ձգտմանը համապատասխանող:

**1. ՄԱՅՐՅԱՄԱՔԱՅԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՐՎԵՍԸ  
ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆՈՒՄ  
(338-146 ԹԹ. Մ.Թ.Ա.)**

**ա. Պատմա-մշակութային ակնարկ**

Աթենքը որպես կարևորագույն մշակութային կենտրոն: Շինարարության սակավացում: *Ջևահ փանարը*, մ.թ.ա. 6-րդ դարից մինչև մ.թ. 2-րդ դար՝ կորնթական օրդերով դիպտերոս: *Քամիների աշտարակը* Ագորայի մոտ, 50 թ. մ.թ.ա.: Ագորան ստոյայով շրջապատելը: Պերիստիլային բակի տարածումը բնակարանային շինարարության մեջ: Հելլենիստական բնակարանի կառուցվածքը, ինտերյերի գեղարվեստական ձևավորումը: Դելոսի, Պրիենեյի, Պոմպեյի, Հերկուլանումի բնակարանները: *Դելոսի Դելֆինի փունը*: *Պոմպեյի Ֆավնի փունը* իր խճանկարներով՝ նվիրված Իսսեյի ճակատամարտին, նաև *Դիոսկուրի փունը՝ Աքիլևսը Լիկոմեդի դարերի հետ* խճանկարով: Վաղ հելլենիստական շրջանի հունական քանդակագործության կապը դասականության հետ: Պիֆոկրիտեսի հեղինակած *Սամոթրակեյի Նիկեն*, 290 մ.թ.ա.: Ագեսանդրի հեղինակած *Մելոսի Աֆրոդիտեն* 3-2-րդ դդ. մ.թ.ա.: Դիմաքանդակը՝ անձի ներքնաշխարհն արտահայտող: *Արիստոտելեսի*, մ.թ.ա. 4-րդ դարի երկրորդ կես, *Էպիկուրի*, մ.թ.ա. 3 դարի սկիզբ, *Դեմոսֆենի*, մ.թ.ա., 2802: Դիմաքանդակներ, հեղինակ Պոլիսկա: *Նսրած բռնցքամարտիկը*, հեղինակ Ապոլլոնիոս, 1 դար մ.թ.ա.:

**2. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՊԵՐԳԱՄՈՍ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ  
ԱՐՎԵՍԸ (283-129 ԹԹ. Մ.Թ.Ա.)**

Պերգամ մայրաքաղաքի դիրքը, հատակագծումը, ակրոպոլիսի համալիրի կառուցվածքը, կազմը, գեղարվեստական հարդարանքի շքեղությունը: Գաղիայի նկատմամբ տարած հաղթանակի առիթով կանգնեցրած Էպիգոն քանդակագործի հեղինակած արձանները Պերգամի ակրոպոլիսի հրապարակում: Ջևահի զոհասեղանը, նրա զանվելու արդի

վայրը: Չոհասեղանի հորինվածքը, չափերը, քանդակային ծովորի սյու-  
ժեն, խիստ արտահայտչականությունը, գաղափարախոսությունը:

### **3. ՀԵԼԼԵՆԻՍԱԿԱՆ ՀՈՌԴՈՍ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍԸ**

Հռոդոսը որպես խոշոր առևտրական կենտրոն, դրա հարստություն-  
նը: *Հելիոս ասարժո* արձանը 30 մ բարձրությամբ: *Լաոկոոն* արձանա-  
խումբը որպես ուշ հելլենիզմի լավագույն արվեստի նմուշ, հեղինակներ  
Ագեսանդր, Պոլիդոր, Աֆինոդոր, 50 թ. մ.թ.ա.: Մեկ՝ դիմային կետից դի-  
տարկվող: Մարմինների անատոմիական անթերի կառուցվածքի ու մո-  
դելավորման վարպետություն:

### **4. ՀԵԼԼԵՆԻՍԱԿԱՆ ՊՏՂՈՍԵՈՍՅԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐՎԵՍԸ**

Եգիպտական և հունական գեղարվեստական ավանդույթների  
միախառնում: *Ալեքսանդրիայի փարոսը*, 3 դ. մ.թ.ա.: Հելլենիստական  
Եգիպտոսի քանդակագործության մեջ եղել են մոնումենտալ քանդակ-  
ներ, սակայն չեն պահպանվել: Դրանց օրինակն էր Նեղոսի հսկայա-  
կան արձանը՝ 16 փոքր տղաների քանդակներով շրջապատված: Ժան-  
րային քանդակը որպես առավել նախընտրելի տեսակ քանդակագոր-  
ծության համար. Նատուրալիզմը քանդակագործության մեջ: *Ծեր չրկ-  
նորսը*: *Երգող նուբիացի տղան*: Բուէֆի հեղինակած *Սագով տղան*: *Ար-  
շավ դեպի շուկա* ժանրային հարթաքանդակը: Բոլորաքանդակում  
պրաքսիտելեսյան ոճի ազդեցությունը. *Կիրենյան Աֆրոդիտե*: Հեռա-  
նկարի բացակայություն: Խճանկարի տարածում բնակարաններում:  
Կիրառական արվեստի վերելք: *Գունչագի կամեան*:

## **5. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՍԵԼԵՎԿՅԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԸ**

Անտիոքը՝ երկրորդ խոշոր քաղաք Ալեքսանդրիայից հետո, կանոնավոր հատակագծմամբ: *Մելիկի և Անտիոքոս 3-րդ արքաների ղիմաքանդակները*: Կոմմագենեի արքա Անտիոքոս 1-ի կառուցած դամբարանային համալիրը և դրա ռելիեֆը Նեմրոթ-Դաղում, 1 դար մ.թ.ա., դրա ընդհանրությունը հունական և իրանական գեղարվեստական ավանդույթների հետ:

## **6. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՄԱՐ**

Հելլենիստական արվեստի բնորոշ գծերը. սինկրետիզմ, կոսմոպոլիտիզմ, ինդիվիդուալիզմ, կատարման բարձր վարպետություն, իրապաշտական բնույթ, ձևի գերակայությունը բովանդակության հանդեպ, կենցաղային թեմաների, ինչպես նաև տիրակալին մեծարելու գերակայությունը քանդակագործության մեջ: Հելլենիստական ճարտարապետության հսկայական ազդեցությունը Եվրոպայում քաղաքաշինական սկզբունքների մշակման, համալիրների կազմակերպման և այգիների նախագծման վրա: Քանդակագործության և գեղանկարչության մեծ ազդեցությունը հռոմեական արվեստի վրա, իսկ հետագայում՝ բյուզանդական միջնադարյան և Մերձավոր Արևելքի արվեստի վրա:

## V. ՀԻՆ ՀՈՌՄԻ ԱՐՎԵՍ

Հին Իտալիայի աշխարհագրական դիրքը, կազմը: Անտիկ Հռոմի պատմության և արվեստի պարբերացումը երեք փուլերով:

### 1. ՆԱԽԱՀՈՐՄԵԱԿԱՆ ԿԱՄ ԷՏՐՈՒՍԿՆԵՐԻ ԱՐՎԵՍ (8-4-ԲԴ ԳԳ. Մ.Թ.Ա.)

Էտրուրիայի աշխարհագրական դիրքը, բնական պաշարները, տնտեսությունը: Էտրուրիայի քաղաքները, դրանց հատակագծման սկզբունքները, եռաստվածության, քաղաքային երեք դարպասների և երեք տաճարների ֆենոմենը: Էտրուսկյան տաճարի կառուցվածքը, նմանությունն ու տարբերությունը հունականի հետ, նյութը, հարդարանքը: Էտրուսկների դամբարանները: Տումուլուսի կառուցվածքը: Վերգետնյա նեկրոպոլիսները: Չերվետերիի *Հարթաքանդակների դամբարանը* 5-րդ դար մ.թ.ա., Տարկվինիայի *Հովազների դամբարանը* 5-րդ դար մ.թ.ա.: *Կոռնեկոյի դամբարանը* 5-րդ դար մ.թ.ա.: Որմնանկարների սյուժեները և կատարման տեխնիկան: Տաճարների տերակոտե քանդակները, անտեֆիքսերն (քիվազարդ) ու ակրոտերիոնները (ճակտոնազարդ): Բոլորաքանդակը: Վուլկա քանդակագործի հեղինակած *Ապոլլոնը Վեյից*, 6-րդ դար մ.թ.ա. և *Հերմեսի գլուխը Վեյից*: *Կասիպոլիսկան գալլուհու* բրոնզե քանդակը, 6-րդ դար մ.թ.ա.: Տերակոտե սարկոֆագների քանդակները: Կիրառական արվեստի նմուշներ. *Բուկերո* սև խեցեղենը 7-5-րդ դդ. մ.թ.ա., սևանկար խեցեղենկարչությունը 6-րդ դ. մ.թ.ա. և կարմրանկար խեցեղենկարչությունը 5-րդ դ. մ.թ.ա.: Բրոնզե հայելիներ, զարդատուփեր, գավաթներ հարթաքանդակներով: *Կանոս* աճյունասափորի յուրահատուկ հորինվածքը:



## **2. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՌ-ՈՍԻ ԱՐՎԵՍՏ 509-27 թթ. Մ.Թ.Ա.**

### ***ա. Պատրճա-մշակութային ակնարկ***

Հռոմի Վաղ հանրապետության շրջան 509-265 թթ.մ.թ.ա., երբ Հռոմին ենթարկվեցին մոտակա ցեղերը, հետո ամբողջ Իտալիան: Հռոմի Ուշ հանրապետության շրջան 264-27 թթ.մ.թ.ա., որի վերջում Հռոմն իրեն ենթարկեց բոլոր միջերկրածովյան երկրները:

